

Allegoria à quatuor regnorum
et quatuor elementorum figuris quod
estus de à quadratum quatuor.

የፖ.ቃ.ቃ.ኋ.ሪ

三

Վալերիան Եզորիչը և Սերդէւ Մաքսիմիչը առաքինի ու
աղջիւ մարդի՝ տեղուն հկած ժամանակ՝ նուն խակ կծու աղջա-
սիրի և բարեգործի հռչակ ունէին. Նրանք շողակնիւ նման մի-
մի փալուն մոլորակներ էին մերթի մագութ—մութ ու մուալլ—
մթնոլորտում. զէթ ալղպէս էր նրանց մասին հասարակաց
կարծիքը.

Խէ մեր թուած քարենասնութիւնները բաւական առաջական և անդորրի բառեր են, տարբեր աստաներով միաւն, ոչ ոք չի կասկածիլ. բայց որ մեր ակնարկան անհատներն էլ բարձր էին կանգնած կարճատես ամբոխի որևէ կասկածան. Քից իրենց հոգեկան ու իդէալական վսեմ ձգտումների նկատմամբ՝ բոլորովին հաւատալի էր:

Սի անդամ, կէս օր էր, երբ Անրոյէլ Մաքսիմիչը, որ
Մալր Աթուլի հացով սնուած ու հաէ եկեղեցու օֆանզակու-
թիւնով իւր բարձրագոյն ուսումն ստացած մը երիտասարդ
էր, նոր էր վեր կացել անկողնից և սիրելի կնոջ ու սիրասուն
զաւակների հետ, ճոխ սեղանի շորջը բոլորուած՝ թէ էր վա-
ւելում. Վասպուրականցի շաղակրատ ու քննող սպասաւորը
կեղծ լարդանքով, կամ ստորաքարշ պատրաստականութեամբ,
մի նամակ դրեց նրա առջն՝ ձեւան նման սպիտակ տփոցի
վրայ Յաղթանդամ, կլորերես, ու աշեալ, կալտառ ու զուար-
թաղէմ, կալուածատէր Սերգէլ Մաքսիմիչը անապարեց ծանօ-
թանալ ալդ թղթի բովանդակութեան հետ, որի հեղինակը իւր
վաղեմի բարեկամներից ու ճեմարանական ընկերներից մէկն
էր. «Թանկագին բարեկամ, — գրում էր նա — գրամմատոլցս, որ
երկար տարիներ մեր ծխական դարոցներում ուսուցչական
պաշտօն վարած մի ընդունակ և շնորհալի անձն է, գեղեցիկ
գրչութիւն ունի և անպարհման վատահելի է, ալժմ անցործ է
և մի պատառ ուշ հացի կարօս. Խնդրեմ շնորհ անեք մի որևէ
պաշտօնով զետեղել ձեր դիւանատան մէջ կամ գաւառական
քաղաքներից մինում. շատանում է նա ծառալի աննշան վար-
ձատրութեամբ. Դորա ազնուութեան և հաւատարմութեան
մասին ես Ալովին երաշխաւորում եմ ձեր առջև Կրինում եմ,

որպէս դաւակների և ընտանեաց տէր՝ ալս պարոնը՝ ըստ ամենալինի արժանի է կարեկցութեան, մանաւանդ որ իւր չնոր. հալի գրչով և ուրիշ բարեմասնութիւններով մեծ լարմարութիւն կարող է բնձեռել ձեր գործերում:

—Հըմ, էլի՞ ողորմութեան խնդիր, էլի՞ ըէկլամներ... անիծածները մող հօ հանգիստ չպիտի տան թնչ անենք թէ վարժապետ է, ընտանիք ունի, քաղցած է...— ասաց Սերգէլ Մաքսիմիչը զմկամակութեամբ՝ մի տեսակ հարցական հակեացք ձգելով իւր նորատի կնոջ շարմաղ երեսին:

—Սերեօժա, հոգիս, ճանապարհ դիր շոտով, թող դնա. ալդ մարդը վարժապետ է եղել, թացի ալդ, պիտի ծանրանան և քո դրապանի վրալ... ալ տղա, առա որ պարոնը ղեռ քնած է և չի կարող ընդունել իրեն.— Կարգսդրեց տիկինը՝ դէմքի տարօրինակ ծամածութիւնով:

—Զէ, չէ, Սոֆիա Պետրովնա, անլարմար է, հասկանում ես... պէտք է ձնով ու քաղաքավարութեամբ վերաբերուել, ամար զրել դիտէ, մեն ու սպիտակը հասկանում է, երեխ ինքն իրեն ինտելիգենտ մարդ է համարում. մանկավարժ է եղել... ևս կարող եմ ախապէս անել, որ ինքն իրեն լողնի ու հեռանալ... ալ տղա, ասա նամակաբերին, որ մտնի ինձ մօտ զիւանատուն վաղը՝ ժամը երկուսին. հասկացար.

—Ճասկացաւ, վաղը ժամը երկուսին, զիւանատուն.

—Անպատճառ դիւանատուն. անլարմար է, որ վարժապետին ալստեղ — մեր տանը տեսնեն: — Խորհրդաւոր կերպով վրալ ընթեց մանկամարդ տիրուհին:

Բ.

Ճետեեալ օրը, առաօտեան վաղ, անշուշտ ճնշող սրանեղութիւնից և անդորդութիւնից ստիպուած, սովոր որկորով, մեր վաղեմի վարժապետը, արևածագի հետ, հսկող պահապանի նման՝ լամրաքալ երթեեկում էր Սերգէլ Մաքսիմիչ դիւանատուն ցանկապատի առջև. Նա նմանում էր ամռան լեղձուցիչ տապից դալկացած տունկի. նոր է բացւում նրա ծաղկի կոկոնը, սակալս սկսել է խամրիլ, հիմծուիլ ու թառամիլ. զլիսիկոր է նա, մտաւոլ և տիսուր. հոգեկան անհնարին վիշաը խորապէս դրոշմուած է նրա կարծես մոմեղին ճակատին. իւր դառնաչարչար քրտինքով ձեռք բերած փորձն ու հմտութիւնը ոչ գին ունէր և ոչ արժէք. իւկ ընտանիքի բաղմաթիւ անդամներին հաց էր հարկաւոր իրենց դժբաղդ զոյութիւնը ալս տատասկու, անհիւրընկալ աշխարհի երեսին մի կերպ քարշ տալու համար... դրամազլուխ չունէր և իսկապէս ընդունակ էլ չէր քաղաքում մանրավաճառ կամ դիւղբում «չորցի» լինելու. շատ անդամ դիմումներ արեց ալս և ալն աղապին, ծանօթին, բարեկամին, զրացուն. . լանգբելով

մի՝ զբաղմունք, մի գործ՝ լինի նա փոքր, ստոր, թէկուղ՝ սպանող իւր մարդկալին սեսը» և վշրող նրա անհատական ինքնուրունութիւնը... բայց ամենն էլ խուս էլին տալիս նորն խակ անուղղակի աջակցութիւնից...»

«Վարժապետի» արտաքինը նրա նիւթական վիճակի պարզ հայելին էր նորա մի ժամանակուալ նորաձեռի իսկ այժմ ողորմելի պի ջակը ոչ մի վոփոխութեան ու բարեփոխութեան չէր ենթարկուել. օձիքը խզոտ, կոճակները թափուած... ամառուաւ սպիտակ գլխարկ՝ նորեմբերի ցրտերին, առանց վերարկուի կամ կենոցի, կոչիկները՝ ծակոտուած ու տասնեակ կարկատաններով ծածկուած, մի դժգուն, բզկտուած ամպհովանի՝ դուրս ցցուած ճաղերով. մի խօսքով՝ բոլորը հին, բոլորը փթած ու ողորմելի դրութեան մէջ.

Մանր էր անցնում ժամանակը. երկու օր է, որ պաքաղաքումն էր, մի ինչ որ Շարիֆ.աղալի անշուք պանդոկում իջետնած. դրամնում դրամ չունէր և անց էր կացնում օրերը համարեա քաղցած. առանց թէլի, առանց որևէ տաք, սննդնդարար կերտակի, սակայն վարյագոյն լուսը թելադրում կամ ներշնչում էր նրա մէջ ոլժ և կարողութիւն տոկալու և՛ ցըրտի, և՛ քաղցի, և՛ անձնական ամեն տեսակ զրկանքի դէմ... մինչև որ պիտի ծագի իւր բաղդի ցանկալի արշալուսը. — չէ որ նա այժմ դիմում է արել իստելիգենտ, աղնիւ, սրտի ու զգացմունքի տէր մարդի, որ շատ շատերի վրալ իւր անորշ լիզուով ու կարելցական ճառերով՝ սքանչելի տպաւորութիւն էր թողել և ապդասէրին պատուաւոր տիտղոսը շահել...

Վերջապէս հնչեց խորհրդաւոր ժամը և սեր բաղդազուրկ մանկավարժը նախանձելի երջանկութիւն ունեցաւ. Սերգէ Մաքսիմիչի բարձր ուշաղրութեան արժանանալ, լսել նրա քաղցրանչյիւն ձախնը, սեղմիլ նրա հայրենասիրական՝ ողորմած ձեռը, Ո՛րպիսի զեղուն զգացումներ ալդ վարկեանին՝ հալզող ձեան նման՝ սահեցան ու լճացան նրա ցամաքած սրբում. նրա տեսութեան առջև, ինչպէս շարժուն պատկերներ՝ վառ գոյներով ու զեղեցիկ դասաւորութեամբ՝ արձանացան իւր ընտանեկան բարեկեցիկ վիճակը, նորատի՝ սիրունիկ կի-նը՝ զոլդ ծաղկափթիթ մանուկներով՝ էլ կրակի նման ամօթից կաս-կարմիր դառած՝ չէր բաղխում օտարի դուռը, ընդհակառակը՝ նիւթապէս ապահով դրութեան մէջ, նա բարեդութեան ձեռ է մնկնում իւր գիտեցած նորնապիսի արգահատելի վիճակի ենթակալ, ի՞ր զինակից — մտքի անձնուէր մշակներին ., պարտատէրները՝ իւրաքանչյուր վայրկեան էլ չեն վրդովում նրա հանդիսան ու արիւնը պղտորում. մանկիկները հագնուած են կոկիկ ու զարդարուն. կուչա ևն նրանք, փափուկ զգեստի մէջ, անկարօտ և ապահով...

— Ճեմարանական ընկերս զրում է ձեր մասին, և խընդրում է հողալ ինչ որ հնարաւոր է. — ասաց կալուածատէր

կառավարիչը կարեկցարար.—ես էլ զգում եմ ձեր վիճակի ծանրութիւնը, սական, սրտի ցաւով պիտի ասեմ, որ առ ալժմ ինձ մօտ ազատ տեղ չի կնքելու առթիւ, զժուարանում ևմ կատարել բարեկամ, ո պահանջը կամ աւելի պարզ ինձ վրայ ծանրացած բարուական պարտքը—Հնարաւորութիւն տալ ձեզ նման դեղեցիկ բարեմասնութիւններով օժտուած պատուական երիտասարդի իւր կացութիւնը մի կերպ բարեկամւու, որ իմ սրախն անքան մօտ է և ցանկալի... սական չըպէտք է վհատիլ մինչև որ ես հնարաւորութիւն կունենամ ձեզ համար մի լարմարաւոր պաշտօն ստեղծել իմ վարչութեան մէջ, կըլանձնարարեմ գերազնիւ Վալերիան Եղորիչին մի համեստ պաշտօն շնորհել ձեզ։ Սկէք ուրեմն ինձ մօտ, վաղը՝ հենց ալս պահուն, ես կդրեմ նրան ձեր մասին ինչ որ հարկաւորն է։ — Աւելացրեց, շատ սիրելի կերպով Անդրէ։ Մաքութիչը, Նախկին ուսուցիչ պ. Գուրգէնեանը՝ գոհունակութեան բուռն ցուցեր արեց և հաճելի տպաւորութեան ներքեւ վերադարձաւ իւր օթեանը, սրտաւորով սպասելով նշանակուած ժամին։

Տաղտկալի ժամանակը սպանելու համար Գուրգէնեանը մի երկար ու ձիգ լուսադրական նամակ գրեց իւր ընտանիքին, ի փառաւորապէս գրուատելով Սերգէլ Մաքսիմիչյանդ «մարմնացած բարութեան» արտաքինը... մինչդեռ նովն երեկոնան գերազնիւ Ա. Մաքսիմը մի ալսպիտի լանձնարարական էր պատրաստել Վալերիան Եղորիչի հասցէին՝ «Գրամատուցս մէկն է թափառալրջիկ, սովոր ուսուցիչներից, ափսոս որ շնորհալի է և լաւ դրչութիւն ունի, ալիսոս եմ ասում, որովհետեւ ներկալ պայմաններում, ոչ միան ուսուցչի, ալլ գրադէտ մարդկանց հետ որևէ առնչութիւն ունենալը անօգուտ է, ասացի իրեն, որ քեզ մօտ կարող է մի համեստ պաշտօն ունենալ գլխից առաջ արի՞ դու էլ լուսադրիք իրեն, բայց կանխապէս արտադրել տուր սրա հետ ուղարկած պաշտօնական թղթերը և վերադարձրու ինձ... մի առ ժամանակ ծառակեցրոն, բայց դիւնատանդ մէջ պաշտօն տալ կամ հովանաւորել, բնաւ խորհուրդ չեմ տալ. դու լաւ գիտես խոստանալու, լուսադրելու և «բարի երթ» մաղթելու կոկիկ եղանակը...»

Վալերիան Եղորիչը մի հաստափոր և ճարպոտ մարդ, որ իւր նորատի կնոջ՝ Կսենիա Պետրովնալի շնորհիւ զօրեղ պրոտեկցիա ունէր և տեղական հասարակութեան սէջ առաջնակարդ տեղ էր բռնում, անծանօթ չէր արդպիսի աղդասիրական օպերացիաներին։ Նա սիրով ընդունեց պ. Գուրգէնեանցին և թղթերի մի ահագին կոլտ դարսեց նրա առջև արտագրելու համար, մինչև որ մի որոշ տեղ պիտի լատկացնէր իւր զիւանատան մէջ։

Միամիտ երիտասարդը լի հաւատով և ամուր լոյսով կը-
լուրս 8

պած էր իւր առժամանակեալ պարապմունքին, նա համո-
զուած էր, որ իւր վիճակը վերջապէս պիտի բարեկարգուի և
մի պատառ չոր հաց պիտի ունենաւ իւր ընտանեաց կերա-
կրելու համար:

Գ.

Այս օրից մի ամիս էր անցել, դեկտեմբերի յրտերին էր.
Շարիֆ - աղալի անշուշ պանդոկում մի մութ և խոնաւ սե-
նեակի մէջ, անլուս և անպաշտպան տարածուած՝ փալիլում
էր մեր վարժապիտի գոլութեան հիւծուած պատրուկը - Դուր-
գէնեանցը բռնուած էր ծանր տենդով, նրա օրերը կարծիս
հաշուած էին...

Կեղառու և անգոյն սեղանի վրայ մատիտով խծնուած
մի ինչ որ նամակ կար, ուր սրձանադրել էր նա իւր գո-
լութեան ալդ աղէսարշ միջնադէպը.

«... ինձ հետ պատահած մանաւանդ վերջն զէսլքը՝ ա-
կամալից հասցնուած է այն պարզ եզրակացութեան, «որ աշ-
խարհիս երեսին ազնիւ, շիտակ ու ճշմարիտ զգացմունքով
մարդիկը, եթէ ոչ գոլութիւն չունին, դէթ շատ և շատ սակաւ
են. ես չպատահեցի սլդպիսի մէկին, ընդհակառակը՝ բոլորը
ետական, էզօխաններ, բոլորը իրենց անձնական շահին ծա-
ռալող՝ մարդատեաց կեղծաւորներ, ու քօլարկուած սրիկաններ
են... Զոլդ, ինտելիգէնս և ազնիւ մարդի հոչակ ստացած
պարոններ խաղ էին անում իմ զժքաղդ գոլութեան, իմ նո-
րատի կնոջ ու ծաղկավթիթ զաւակներիս արևի հետո. մի
ամբողջ ամիս քաղցած ու ծարաւ ինձ չարչարելուց լետով՝
վերջապէս աղղարարեցին, որ մի ուրիշ զբաղմունք որո-
նէի. որ իմ աշխատութեան համար որեւէ վարձ վճարել ան-
կարող էին... մինչդեռ կարենոր էր ինձ հասուցանել պան-
դոկի համար, ճանապարհածախս տուն վերադառնուու վեր.
Չափէս պէտք է կերակրել և ձմեռուալ սառնամանիքի դէմ
պաշտպանել իմ ընտանիքի աննքան տարաբաղդ գոլու-
թիւնը... գողանալ, կեղծել ու ստել չգիտեմ. իսկ ձեռ մեկնել՝
ողորմութիւն մուրալու... ալդ էլ զժուար թէ բարեկարգէր իս
անհամարին կացութիւնը».

Օ՛հ, աշխարհը նեղ է ինձ համար. Նրանի թէ մահը մի
վարկեան առաջ վրայ հասնէր և վերջապէտ դնէր իմ զառնա-
չարչար կեանքին... երանի թէ՝ բնաւ լուս աշխարհ տեսած
չլինէի ես. կոտրուէր այն որորանը, որ ինձ վշտերի համար
միան մեծացըրեցու».

Պանդոկապիտ Շարիֆ-աղան, որի պիղծ ու անմաքուր
ձեռները թաթ ախուած էին տասնեակ մարդկանց անմեղ ա-
րինով, շշափելով. լուսամիտ մարդի ալսպիտի աղէսարշ մի-
ճակը սաստիկ զգացուեց. նա խիշացնորի նման վաղ էր տա-

Վիս ալս և ալն կողմ՝ բժշկի, դեղի, դարմանի... կարեկցական խօսքերով և ամենալին պատրաստականութեամբ լուսադրում և հոգեպէս միաթարում էր ընկած մարդին:

— Սիրտ մռ, եղբայր,—ասում էր նա—Աստուած ողորմած էս ոչ մը բանի համար մի մտածիր. ես պատրմատ եմ քեզ նիւթապէս օգնելու. մռ որքան դրամ և կամենաս. չք որ աշխարհի գոլքը, հարստութիւնը՝ աշխարհին էլ պիտի մը-նալ. Ալլահին փառք, ես մըջոց ունեմ, մարդ եմ, մնդք է որ, դէթ իմ հոգու համար, ուրիշներին էլ կարեկից Ահնիմ, երբ առիթը ներկալանում է, թէկուզ ալլակրօնի, անհաւատի և իմ ոխերիմի համար լինի ալդ...

— Շարիֆ-աղա, մի երկու տող բան եմ գրել իմ ներկալ դրութիւնից և մարդկանց մասին, որպէս է գոհ սատն երի շատ աննպաստ կարծիք լատոնել, թոլլ տուր աւելացնել, որ մի պատահական մանմետական անհամեմատ ազնւութեամբ և զգացմունքով վերաբերուց դէպի մի ընկած և կարօտ անձն՝ որից ոչ մի բարոլական կամ նիւթական շահ չէր կարող ակըն-կալել, ալսինքն դէպի ինձ, նա առաւել խղճմտանք և գութ ցուց տուեց քան թէ զուգ սկրեսոսները, ազգասիրի ու մարդասիրի մնահանչիւն ե արլիկի ներքն պատսպարուած իմ քրիստոնեալ եղբայրները, Եւ նա լոեց. գունատ դէմքի վրայ խաղաց վարդադոյն ժամանութեամբ. իսկ մահմետականի արիւնաներկ աչքերում փալլատակիցին արտասուքի զուգ խոչոր կաթիլներ. դրանք ներքին լուզման ամենազօրեղ վիժմունքներ էին. Չք որ նրա կատարած բարեգործութիւնը արդէն պսոկուած և վարձատրուած էր բարոլապիս. Թերեւ լաւիտենական երգեհոնի սրտափիրով ձալնը շողում էր նրա լսելիքը...

¶.

Ալն օրից երկու չարաբաստիկ շաբաթներ անցան: Տեղական թերթերում մի այսպիսի տխուր լուր էր տպագրուած «X. Քաղաքում լատոնի մանկալարժ միշտ անարծաթ և չքաւոր, սակալն ամբողջ սրտով նուիրուած իւր պաշտած գործին կնքեց իւր երկրակինը, պանդիտութեան մէջ, Շարիֆ-աղալի պանդոկում. իւր գոյութեան վերջին վալրկեաններում նա իրեն անմեղ զոյ էր համարում անագորոյն բաղդի մի խաղին... և թախծութեամբ չիշում էր մանկիկների ալն հասարակութիւնը, որոց լուս և գիտակցութիւն նիւրչնելու կոչուած էր նա մի որոշ ժամանակ:

Հանդիսաւոր էր նրա թաղումը, գրեթէ ողբում ու լաց էր լինում քաղ սքի հասարակութեան ստուար մեծամասնութիւնը, սրտաշարժ, մելամաղձիկ, դամբանականներ խօսուեցին և շատ պասկներ զրուեցին... մինչդեռ կենդանութեան միջոցին ոչ ոք չկամեցաւ առաջն առնել բաղդի ալն ուժգին

հարուածի, որ ամենալն թափով իշնում էր լաւագոլն մարդի և ազնիւ մշակի վրալ...

Նախկինս ո.սուցիչ Գուրդէնեանցի, ծերունի ծնողները և մանկամարդ ալրին մնացին զոլդ որբիկներով օրական պարէնի կարօտ, գրեթէ փողոցում թափուած, անտէր և անտէրունջու...

Այժմ՝ դուք, Վալերիան Եղորիչ և Սէրգէլ Մակսիմիչ կարող էք հանգիստ սրտով քուն լինել. Էլ նա չի բաղխիւ ձեր դուռը մի պատառ սև հացի համար, մանաւանդ որ կոլր և անմիտ ամբոխը՝ ըստ առաջնորդ՝ պիտի շարունակէ լարգանաց ողջուններով մեծարել ձեզ՝ իրբե մտքի լուսաւորութեան շատագովների, ազնիւ, մարդասէր և բարեգործ մարդկանց. Եւ դուք, որպէս հմուտ ձեռնածուներ՝ արժանի էք արդարիսի քաշալերութեան...

ԿՐՊԻՇ